

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ»Ի

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ՝ ՄԱՍԻՆ

(Սկիզբը տե՛ս ՍԻՈՆ, 1974, ք. 1-2, էջ 89)

9. Նա եւ զպաշտանեայն իսկ իւրեանց՝ երբ ոչ Աստուծոյ սաստ պա-
հէր, ազգի ազգի խեղութեամբ *խեղեին*, եւ անհնարին մտնուալք *սպանա-*
նելին (Մ 42-16, Բ 88) — «Նոյնիսկ նրա սպասաւորներն էլ տեսաւ-տեսակ խե-
ղումներով կ'ալլաւղակէին (մարդկանց) եւ զաժան մահերով կը սպանէին, եւ
թէ ստածու ստատումը չսպէր նրանց» (71-72) :

Թարգմանիչը անտեսելով դարարի քերականութիւնը՝ զպաշտաւ-
նեայն Հայցականը կամ ուղիղ խեղիբը դարձրել է ենթակայ եւ դեւերի չորա-
դործութիւնները վերադրել է այդպիսով դիւսպաշտներին: Բացի դրանից,
իւրեանց յոգնակին թարգմանել է եզակի՝ «նրա», 170րդ ծանօթագրութեան
մէջ արամազդարար որոշելով, թէ «ծիշտը կը լինէր եզակիով»: Սխալ է նաեւ
Գ. Խաչատուրեանը (էջ 42-43) :

10. Զոր քեպէտ եւ ի մեր լեզու՝ այս չար ասեմք, որպէս ի խորանոց
հարցն մերոց առաջնոց, ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ (Մ 44-3-4, Բ 92)
— «Սա մեր լեզուով թէեւ 'այս չար' ենք տառմ' մեր նախնիների աւելորդա-
պաշտութիւնից մեզ աւանդուած սովորութեան համաձայն» (74) :

Նոր հայկազեան բառարանը եզնիկի հենց այս տողը վկայակոչելով՝
խորանոց բառը բացատրել է «որոշումն», տարբերակում է եզնիկը չէր կարող
այն տարբերակումը, որով «մեր առաջին հայրերը» որոշել են չար եւ բարի ու
դիւնները, այսինքն՝ հրեշտակներն ու սատանաները կամ դեւերը, որակել որպէս
աւելորդապաշտութիւն: Մեր «նախնիները» այդ խորանքը կամ տարբերակումն
արել են, որովհետեւ սկզբնապէս հայրէջնում, ինչպէս նոյն տեղում գրել է
եզնիկը, «Գիտեմք, եթե այսն հոգմ է, եւ հոգմն՝ ոգի» եւ նոյնիսկ «սիք»,
չունչ: Հրեշտակները, սատանաները կամ դեւերը եւ մարդկային հոգին կամ
ոգին սկզբում հաւասարապէս «այս» կամ «ոգի» են կոչուել հաւանաբար եւ ա-
պա միայն տարբերակուել «բարի» կամ «չար» անականներով: Յիշենք Եղիշէի
հետեւեալ խօսքերը. «Գոն եւ դեւ բարի, զոր դուք եւ մեք հրեշտակս անուա-
նեմք» (Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 31) : Գ.
Խաչատուրեանը չի գործել այս սխալը (45-1) :

11. Զհիւդեայն կարծիս, որովք Յոյնքն մոլորեցան, բաւական համա-
րեսցուք տառնոց բանիցն յանդիմանութեամբ վնարել (Մ 52-6-7, Բ 112) —
«Հիւլէին վերաբերող կարծիքը, որով յոյները մոլորուեցին, բաւական համա-
րենք նախնիների խօսքերի քննադատութեամբ հերքել» (84) :

Բնագրի առաջնոց անականը թարգմանուել է «նախնիներ», եւ իբր եզ-

1 Եզնիկ կողքացի, ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ. Ազանցների երբում: Թարգմանութիւնը, նե-
րածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ա. Արրահամեանի: Երեւան, 1970:

նիկը նրանց «խօսքերի քննադատութեանը» է հերքելու հիւլէին վերաբերող կարծիքը: Ով ինչպէս կ'ուզի, այնպէս էլ կարող է հասկանալ «խօսքերի քննադատութեամբ» բառերը. այդ խօսքն են քննադատում, թէ այդ խօսքերն իբրեւ քննադատական զէնք են օգտագործւում:

Առաջնոց ածականը պարզապէս բանիցն զոյականի որոշին է եւ ոչ թէ յատկացուցիչը. ուստի առաջնոց բանից յանդիմանութեամբ նշանակում է «նախորդ (առաջին) խօսքերով յանդիմանելով», «առաջին խօսքերի յանդիմանական (քննադատական) ուժով»: Այդ «առաջին խօսքերը» Եղնիկի երկի այսպէս կոչուած «Առաջին գրքի» խօսքերն են, որոնցով, ի միջի այլոց, նա քննադատել է նաեւ հիւդի մասին Յոյների տարածած կարծիքները: Այստեղ քննարկուող սողերը Եղնիկը գրել է պարսից քէշի քննադատութեան անցնելուց անմիջապէս առաջ: Նա եղբայրակում է հիւդի քննադատութիւնը. սակայն այդ յանդիմանութիւնը «նախնիների խօսքերով» չէ, այլ իր իսկ խօսքերով է կատարել: Եղնիկն իր առաջին խօսքերը կոչել է նաեւ «առաջին ճառք»՝ հմմտ. «Որպէս բաղում անգամ յոգնադոյն աւրինակաւ ոչ մոռացաք յառաջին փառսն յայտ առնել» (Մ 65-6, Բ 144): Նոյն սխալը գործել է նաեւ Գ. Քաջատուրեանը (էջ 54):

12. Եւ այն եւն զարմամֆ՝ զի մինն ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր, եւ միւսն՝ յառժամայն յերկմտութենէ ամտի (Մ 56-21, Բ 124) — «Եւ զարմանալին այն է, որ մէկը հազարամեայ զոհաբերութեամբ հազիւ ծընուեց, իսկ միւսը հեցն ուր երկմտելուց (ծնուեց)» (90):

Աւելի ճիշտ կը լինէր բնագրի լինելը բայր թարգմանել «ծնունդ առաւ» կամ «սաղմնաւորուեց, յղացուեց», «գոյութեան եկաւ»: Այս ասում ենք նկատի ունենալով հեղինակի հետեւեալ խօսքը. «Եւ մինչդեռ նա զայս խորհէր, Որմիզդ եւ Արհմն յղեցան յարգանդի մասը իւրեանց. Որմիզդն ի յաշտն առնելոյ, եւ Արհմն՝ ի յերկուանալոյ անտի» (Մ 52-17-19, Բ 113), որ նախորդում է քննարկուող նախադասութեան:

Ճիշտ է է թարգմանուած բնագրի յերկմտութենէ ամտի-ն՝ «Երկմտելուց», այսինքն՝ պատճառի պարագայ է: Սակայն յառժամայն չի նշանակում «հենց նոր», այլ «կայրկենական, ժամանակաւոր» (տե՛ս Նոր հայկազեան բառարան՝ Առժամայն): Այստեղ այն ածական է եւ, որպէս այդպիսին, ընդունել է որոշալի («յերկմտութենէ») ի(յ-) նախդիրը՝ յառժամայն: Սակայն հետեւեալ նախադասութեան մէջ, որ այստեղ քննարկուողից տարբերւում է միայն «յերկմտութենէ» զոյականի «յերկուանալոյ» համապատասխան բայով, յառժամայն յերկուանալոյ ամտի բառերը թարգմանուել են այս անգամ «Երկմտելուց անմիջապէս յետոյ»: այսինքն՝ պատճառի պարագայից զարձեւ են ժամանակի պարագայ, ինչպէս Գ. Քաջատուրեանի թարգմանութեան մէջ (61, 63):

Եւ միւսն եւս՝ որ քան զամեմայն անհաւատագոյնն է, զի մին ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր, եւ միւսն յառժամայն յերկուանալոյ անտի (Մ 58-5-7, Բ 127-128) — «...մէկը հազարամեայ զոհաբերութեամբ հազիւ ծնուեց, իսկ միւսը երկմտելուց անմիջապէս յետոյ (ծնուեց)» (92): Այս նախադասութեան «ծնունդ» բային էլ է վերաբերում վերելի գիտողութիւնը: Որմիզդի ծննդեան ժամանակի ստուգութիւնը թարգմանչին ենք պարտական. բոտ Եղնիկի՝ «Եւ մինչ դեռ նոքա (Զրուան եւ Արհմն. Մ. Մ.) զայս ընդ միմեանս խաւսէին, ծնեալ Որմիզդի ի ժամու իւրում...» (Մ 52-29):

13. Միքե կասկա՞ծ ինչ ուստե՞ք էր մմա...միքե յորմէ գորդի՞ն խրնդրեաց, քե զուցէ ընդ որդւոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու (Մ 58-25-26, Բ 129)

— «Մի՞թէ Զրուանը որեւէ տեղից կասկած ունէր... մի՞թէ նրանից (էր կասկածում), որից խնդրեց որդին՝ (մտածելով), թէ որդին ապու գիմաց գուցէ հատուցում պահանջի (էջ 92-93) :

ա. Դասական դրարարում, ուստի եւ այս նախադասութեան մէջ գուցէ բառը նշանակում է «մի՞ գուցէ, չլինի՞ թէ», եւ ոչ թէ միայն «գուցէ» :

բ. Ձևա բաժ առնուցու բառերը նշանակում են «(չլինի՞ թէ) նրան բաժին առնի», եւ ոչ թէ «հատուցում պահանջի». թարգմանուած չէ զմա հայցականը. Զրուանը վախենում էր, որ իրեն Որմիկոյ որդի շնորհած վերադոյն էակը իրեն որպէս բաժին առնի հենց Որմիկոյին : Կրօններում այս երևույթը կայ. Եւհոփան իրեն էր վերապահում Բարայելի առաջնեկներին : Գ. Սաշատուրեանը գործել է նոյն սխալը (64) :

14. Դարձեալ՝ զի քազաւորութիւնն որդւոցն ետ (Զրուանն. Մ. Մ.), միում զիցն հազարամեանն, եւ միւսումն զանապառկամն, իմքն յորո՞ւմ կարգի կայցէ : Զի մինչ չէրն ինչ՝ չէր իմիք թաղաւոր, քանդի եւ ոչ արարիչ իրիք էր (Մ 57.10-12, Բ 125) — «... միքը ո՞ր կարգում պիտի մնար : Զե՞ որ երբ դեռ ոչինչ չկար, չկար մեռն որեւէ բանի քազաւոր, որովհետեւ որեւէ բանի արարիչ էլ չկար» (91) :

Ճիշտ թարգմանուած չէ բնագրի չընդգծուած մասը : Յայց տալու համար, որ խօսքն այստեղ Զրուանի մասին է, մէջբերեցինք նաեւ այդ մասին յայտնող տողերը : Քանի որ հեղինակը նրան նկատի ունի, ուստի միանգամայն բնական է, որ բնագրի վերջին նախադասութեան չէր եւ էր բայերը նրան են վերաբերում, իսկ թարգմանութեան մէջ ընդհանուր են՝ «չկար» : Քանի որ հեղինակը Զրուանին է նկատի ունեցել, ուստի չէր իմիք քազաւոր բառերը նշանակում են «(Զրուանը) որեւէ բանի թաղաւոր չէր», եւ շարունակութիւնն էլ նրա մասին է՝ քանզի եւ ոչ արարիչ իրիք էր — «որովհետեւ որեւէ բանի արարիչ էլ չէր» : Բնագրի ամբողջ չընդգծուած մասի թարգմանութիւնն է. «Որովհետեւ երբ դեռ ոչինչ չկար, (Զրուանը) որեւէ բանի թաղաւոր չէր, որովհետեւ որեւէ բանի արարիչ էլ չէր» : Զի բառը, որ նշանակում է «որովհետեւ», թարգմանուել է «չէ՞ որ» անտեղի ճարտասանական հարցով : Գ. Սաշատուրեանը ճիշտ է թարգմանել այս բառը՝ «պատեղի». մնացածում օրինակ է եղել մեր թարգմանչին (էջ 62) :

15. Յանկածութեանն յաղթեցին բարւոյն (Մ 64.20, Բ 143-144) — «Ստորութեամբ յաղթեցին բարուն» (99) :

Իսկ Սաշատուրեանը գրել է «նուստութեամբ» (էջ 70) : Ըստ նոր հայկադեան բառարանի, անկածութիւն նշանակում է «Վիճակ անկածի... ընկածութիւն» : «Ստորութիւն»-ը Արբաշամեանի քաջատրութիւնն է : Բացի սրբանից, վիճակ արտայայտող յանկածութեանն ներդոյականը այստեղ ոչ մի կերպ չի կարելի թարգմանել «ստորութեամբ» գործիականով : Զպէտք է անտեսել նաեւ այդ բառի ն յօդը : Ուստի յանկածութեանն բառը նշանակում է «խրենց (այդ) անկածութեան մէջ (ժամանակ)» :

16. Ընդէ՞ր ի Ընդիկս ոչ ոք երբեք սպիտակ ծնաւ, եւ ոչ յայլ աշխարհիս այնպիսի ինչ երեւակ : Միքէ ա՞նդր միայն ոչ եղաւ աստղն սպիտակարար (Մ 69.20-22, Բ 155) — «Ինչո՞ւ հեղիկներն մէջ ոչ ոք երբեւէ սպիտակ չժընուեց, եւ ոչ էլ ուրիշ աշխարհներում՝ մի այնպիսի սեւամորթ մի՞թէ չհասաւ այնտեղ սպիտակարար աստղը» (106) :

Նոր հայկադեան բառարանում երեւակ բառի երկրորդ իմաստի համաձայն, բնագրի այնպիսի ինչ երեւակ բառերը նշանակում են «այնպիսի մի երեւոյթ» (տեղի չառնեցաւ) : «Մի այնպիսի սեւամորթ» կարգալով՝ տկամայ

Հարց է տալիս մարդ. «ինչպիսի՞նք սեւամորթ», քանի որ մինչ այդ սեւամորթի մասին խօսք չի եղել: Այս արտայայտութիւնը Խաչատուրեանի «այդպիսի սեւագոյն մը» թարգմանութեան արեւելահայացումն է (էջ 76):

Արբաճամեանի թարգմանութեան մէջ անտեսուած է բնագրի միայն բառը, որ Խաչատուրեանը չի մոռացել «միթէ միայն այնտե՞ղ հասաւ...»:

17. Եւ ոչ երկինք իսկ՝ ընդ որով նոքա շրջին՝ կեցողացուիլն ինչ մը տաւոր եւ բանասր ունին:

Այլ երկինք եւ երկիր անաբք հտեղակալք եմ հաստատեալք յարարչէն, ունել ամփոփ ընդ ինքեամբ զամեմայն՝ որ ի միջի նոցա է (Մ 71:3-6, Բ 158-159) — «Եւ ոչ իսկ երկինքը, որտեղով նրանք շրջում են, մտային ու հոգեկան կենդանութիւն չունեն: Այլ երկինքն ու երկիրը անշարժ անօթներ են՝ հաստատուած արարչի կողմից, տեղաւորելու այն ամէնը, ինչ կայ իրենց մէջ» (107):

Քանի որ գործիական հոլովի հետ գործածուելով ընդ նախդիրը արտայայտում է «տակ» իմաստը, ուստի ընդ որով նշանակում է «որի տակ», եւ ոչ թէ «որտեղով» (Խաչատուրեան՝ «որուն մէջէն», էջ 78): Ընդ նախգրով գործածուած դոյականը կարող է լինել ընդհանրապէս տեղի պարագայ, ցոյց տալ պարագայէն տեղ. սակայն Եղնիկի պատկերացմամբ երկինքը «մեծի տան» ձեղունն է, իսկ երկիրը՝ նրա յատակը, եւ լուսատուները, այդ թւում եւ արեւ-գաղը շարժւում են նրանց երկուսի միջեւ՝ «ի մէջ ձեղունն եւ յատակի»: Ուստի լուսատուները պտտւում են երկնքի տակ:

Բնագրի ունել ամփոփ ընդ իմեհամբ բառերը թարգմանուել են մի բառով՝ «տեղաւորելու», փոխանակ «իր ներքեւում ամփոփ ունենալու»: Խաչատուրեանը թարգմանել է «ամփոփելու իրենց մէջ»: Արբաճամեանն անտեսել է ընդ իմեհամբ բառերը՝ «իր ներքեւում»: Թարգմանութեան մէջ «տեղաւորելու» զերբայի բուն ենթական հաւանարար «երկինքն ու երկիրը» բառերն են, որոնց վերաբերում է «իրենց» զերանուեր: Քանի որ սրա համապատասխանը բնագրում նոցա է, որ ոչ թէ ենթական այլ խնդրի ունեցուածքն է ցոյց տալիս սովորաբար, եւ քանի որ ընդ իմեհամբ զերանուեր եզակի է, ուստի Մարիէտի հետ կարծում ենք, որ ունել ամփոփ ընդ իմեհամբ զերբայական զարժուածի ենթական է արարիչը՝ «...տեղակալք են հաստատեալք յարարչէն՝ ունել ամփոփ ընդ իմեհամբ զամենայն, որ ի միջի նոցա է» — «անշարժ հաստատուած են արարչի կողմից՝ իր ներքեւում ամփոփ ունենալու համար այն ամէնը, ինչ նրանց (այսինքն՝ երկնքի եւ երկրի) մէջ (կամ՝ միջեւ) է»:

18. (Լուսաւորքն) եմ հարկաւորք բնակաւորք (Մ 71:8, Բ 159) — «Նրանք պէտքական բնակաւորքն են» (107):

«Բնակաւոր» բառը չկայ Հայկ. ակադեմիայի կողմած «Ժամանակակից Հայոց լեզուի բառարան»-ում: Ենթադրում ենք, որ թարգմանչի համար այն նշանակում է «բնական», ինչպէս զրարարում, քանի որ Եղնիկի «Ոչ են եւ կամուտ ի նա կամքն, այլ բնակաւորք» նախադասութեան նոյն բառը թարգմանել է «բնական» (էջ 114): Ուստի, եթէ ճիշտ է մեր հետեւութիւնը, «են հարկաւորք բնակաւորք» բառերը նշանակում են «պէտքական բնականներ են» («Նրանք պէտքական բնակաւորներ են», զրել է թարգմանիչը): Ըստ Հայկազեանի բառարանի, «հարկաւոր» բառի նշանակութիւններից է նաեւ «սպասարկու, պաշտօնեայ». ուստի բնագրի բառերը կարելի է թարգմանել «բնական (ի բնէ) սպասարկուներ (ծառայողներ) են» լուսատուները: Մարիէտը թարգմանել է. «Ի բնէ ծառայութեան մէջ են»:

Խաչատուրեանը «մնայուն» է թարգմանել բնակաւոր բառը (էջ 78):

19. *Քնդրեաց* սատանայ խաբրալել գնեզ իբրիւ գցորեան (*Մ* 81.3, *Բ* 181) — «Սատանան փնտրեց ձեզ, որ ցորենի նման մաղի» (119) :

Հայերէն Աւետարանում այս նախադասութեան չարադատութիւնը մի փոքր այլ է. «Սատանայ խնդրեաց գնեզ խաբրալել իբրեւ գցորեան» (*Ղուկ.*, *ԻԲ*, 31) : Նշանակում է. «Սատանան խնդրեց ցորենի պէս խաբրալել ձեզ», այսինքն՝ սատանի փորձել : Յիսուսն է ասում այս խօսքը իր աշակերտներին : Գրիստոնէական վարդապետութիւնը սովորեցնում է, եւ եղնիկն էլ բազմիցս զրել է, թէ սատանան քանի հրաման կամ թոյլտուութիւն չի ստացել Աստուծոյ, չի համարձակում փորձել մարդուն, ինչպէս յայտնի է Յորի եւ Յուդայի օրինակներէր : Աւետարանի մէջբերումից անմիջապէս յետոյ եղնիկը զրել է. «Եւ փորձելոյն (Աստուած. Մ. Մ.) այնչափ տայ մնա իշխանութիւն, որչափ մարդուն հանդուրժել կարէ» : Աստուած վաղուց խոստացել է այս, եւ Առաքելայր յիշեցրել է Կորնթացիներին զրաժ առաջին Թղթում (*Ժ*, 13) . «Հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկէզ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր», որ նոյն տեղում մէջ բերել է եղնիկը՝ յայտարարելով «Որպէս երանելի Առաքելայ առէ, թէ...» : Ի միջի այլոց ասենք, որ Աբրահամեանը մեր ընդգծած հաւատարիմ բոլոր թարգմանել է «Հարազատ» (*էջ* 120) . այստեղ խօսքը այն մասին է, որ Աստուած հաւատարիմ է իր խոստումին, այն չի զրժում երբեւէ :

20. Եւ առ եղեկիաւ ասէ. զարձցի շողմ անդրէն յետս գոտան աշտինաւաւ աքաղեան ապարանիցն (*Մ* 84.9-10), *Բ* 189) — «Եղեկիայի վերաբերմամբ էլ է ասում՝ Շողը թող տասր աստիճանով ետ դառնայ Ափղեան ապարանքից» (123) :

Թարգմանութեան մէջ չափերտներում առնուած խօսքը «Եղեկիայի վերաբերմամբ» է, այլ եղեկիայի ժամանակ է ասուել Աստուածաշնչում, նրա հիւանդութեան ժամանակ, ինչպէս նկատել է տալիս թարգմանիչը, որպէս նշան Աստուծոյ կողմից, որ իր խոստումը կատարելու է : Տե՛ս Եսայի, *ԼԸ*, 7-8 : Բացի Աստուածաշնչի փաստից ասենք, որ Ա. Աբրահամեանը իր «Գրաբարի ձեռնարկ»-ում չի սովորեցնում, թէ առ նախդիրը զործիականի հետ զործածուելով նշանակում է «փերաբերմամբ», այլ «համեմատութեամբ» :

Բնագրի եւ-ը պիտի թարգմանէր «եւ» եւ ոչ թէ «էլ», քանի որ եղեկիայից առաջ հեղինակը ուրիշի «փերաբերմամբ» բան չի ասել :

Եղնիկի մէջբերումների աղբիւրը նշելիս թարգմանիչը օգտուել է Մարիէսի եւ Մերսիէի թարգմանութիւնից, սակայն երբեմն ոչ խելացիօրէն. 336-րդ ծանօթագրութեան մէջ Ա. Աբրահամեանը զրել է. «Տե՛ս Եսայ. *ԼԸ*, 8 : Սակայն այստեղ Աքաղեան ապարանքի մասին չի նշում» : Նա թերացել է նախ եւ առաջ ասել, թէ այն բառերը, որ ինքը չափերտների մէջ է առել իբրեւ մէջբերում Եսայի, *ԼԸ*, 8-ից, եղնիկի բառերով չկան նշուած աղբիւրում : Այդ պատճառով Մարիէսը (թարգմանութիւն էջ 97, ծան. 3) բոլոր բառերը չափերտների մէջ չի առել թարգմանութեան մէջ եւ որպէս եղնիկի աղբիւր նշել է ոչ միայն Եսայի, *ԼԸ*, 8 (որ Աբրահամեանը շտապել է կրկնել որպէս միակ աղբիւր), այլեւ Դ. Թադ., *Ի*, 9, 11 : Ուստի պարզ է, որ եթէ եղնիկի բառերը չկան Եսայի, *ԼԸ*, 8-ում, ապա այստեղ «նշում չի լինի» նաեւ Աքաղեան աքաղառնքի մասին : Սակայն Մարիէսի նշած երկրորդ աղբիւրում՝ Դ. Թադ., *Ի*, 9, կարդում ենք. «Դարձաւ... աստուերն... գտաւ աստուերն աստիճանօք Ափղու» :

21. Նախ Դաւիթ իսկ, որով զամենայն իմանալի գաւրութիւն եւ գերելի արարածս ի փառատրութիւն արարչին կոչէ, յորժամ ասիցէ. «Արիհնցէք գնա...» (*Մ* 87.1-3, *Բ* 195) — «Նախ՝ հենց Դաւիթի միջոցով, որը բոլոր անտեսանելի գոյացութիւններն ու տեսանելի առարկաները արարչին փառա-

բանեկու է կոչում, երբ ասում է՝ «Օրհնեցէ՛ք...» (127) :

ա. Չհասկանալով բնագրի իմաստը, թարգմանիչը 349-րդ ծանոթութեան մէջ գրել է, թէ բնագրի «Դաւիթ» ուղղականը «Պէտք է լինէր «Դաւթաւ» : Այս իր սխալն արդարացնելու համար բնագրի որով դործիականը թարգմանել է ուղղական՝ «որը» եւ Դաւիթն է վերագրել բնագրի կոչէ եւ ասիցէ գործողութիւնները : Նոյնը արել է նաեւ Սաշատուրեանը՝ պատշաճօրէն «Դաւիթ» ուղղականը : Մինչդեռ Դաւիթը միայն ասիցէ ստորոգելի ենթական է . իսկ կոչէ ստորոգելայի ենթական ճիշտ նախորդ տողում գործածուած «հոգի» գոյականն է, այսինքն՝ աստուածային հոգին, որ մարդարէն միջոցով պատմում է արարածների ստեղծագործութիւնը : Ճիշտ է թարգմանել Մարիէսը . բնագրի իմաստն է . «Նախ հենց Դաւիթը, որի միջոցով (հոգին) կոչ է անում մտաւոր (թմրացութիւն ունեցող) գործութիւններին եւ երեսցող արարածներին՝ փառաբանելու արարչին, երբ ասում է . «Օրհնեցէ՛ք...» :

բ. Մեզ անհասկանալի մնաց, թէ ինչո՞ւ բնագրի իմաստալի գաւրութիւնն րառակապակցութեան առաջին բառը թարգմանուել է «աւետեսանելի», երկրորդը՝ «գոյացութիւններ» : Զարուքիւնք-ը, թրիստոնէական փարդապետութեան համաձայն, հրեշտակների մի դաս է : Մոյսէսի օրհնութեան մէջ այս բառը նորից է գործածուած . «Օրհնեցէ՛ք զնա երկինք եւ երկիր եւ հրեշտակք եւ գաւրութիւնք եւ հօւր...» . ընդգծուած բառն այս անգամ թարգմանուել է «գորութիւններ» : Այս երկու գաւրութիւնք-ը նոյնն է, ուստի զոնէ պիտի թարգմանուէր նոյն «գորութիւն» բառով : Հաւանարար թարգմանիչն էլ գիտէ, որ այս բառը նշանակում է նաեւ հրեշտակների մի դաս, եւ թերեւս զրանից զըրդուած է թարգմանել «աւետեսանելի գոյացութիւններ» բնագրի իմաստալի գաւրութիւնն րառերը :

գ. Մեր վերջին դիտողութիւնն այն է, որ քննարկուող նախագատութեան արարած բառը թարգմանուած է «առարկայ», փոխանակ հենց «արարած» :

22. Եւ պատճառս փոփոխմանց չորից բնութեանցն գաստեղս՝ իբրեւ զկենդանիս ինչ՝ զմեմն : Զայս ամենայն ասեմ հայթայթանալք, զի գերկիմս եւ զլուսաւորսն կենդանիս եւ աստուածս կարծեցուցեմ (Մ 89.15-18, Բ 201) — «Զորս տարբերի փոփոխութիւնների պատճառն էլ համարում են աստղերը՝ որպէս ինչ-որ կենդանիներ : Եւ այս բոլորն ասում են միզ ու ջանքով, որպէսզի կարծել տան, թէ երկինքը եւ լուսատուները կենդանիներ ու աստուածներ են» (130) :

ա. Ինչպէս նկատելի է, բնագրի կենդանիս բառը երկու անգամ թարգմանուել է «կենդանիներ», որ անշուշտ նշանակում է «անասուններ», քանի որ յոգնակի է դրուած թարգմանութեան մէջ : Եթէ այդ բառը թարգմանութեան մէջ նշանակէր «կեանք ունեցող, ապրող, կենսունակ», ապա պիտի դրուէր եւ զոսկի կամ թարգմանուէր «կենդանի արարածներ» : Նոյնպէս թարգմանել է նաեւ Սաշատուրեանը, որ, ի միջի այլոց, մոռացել է բնագրի «աստուած» բառը : Կասկած չկայ, որ բնագրի կենդանիս բառն այստեղ նշանակում է «կեանք ունեցող, ապրող, կենդանի արարածներ» . հեթանոսներն այդպիսին էին կարծում երկինքն ու աստղերը եւ զրանցից առաջ չորս տարբերը՝ «հոգք բնութիւնք», քանի որ չարմուն են : Սրանք չէին կարող կենդանիներ, այսինքն՝ անասուններ համարուել : Լուսատուները չէր կարելի համարել թէ՛ կենդանիներ եւ թէ՛ աստուածներ, ինչպէս դրուած է թարգմանութեան վերջում : Կենդանի բառը «կենդանի» է թարգմանուել նաեւ էջ Մ 142.2 :

բ. «Ասեն հայթաթմանաւ» բառերը Խաչատուրեանը թարգմանել է «կը ջանան ըսել», Աբրահամեանը՝ «ասում են ճիշդ ու ջանքով»։ Ինչպէս «կը ջանան», քանի որ արտաքին փոխառութիւնները դիւրութեամբ էին ասում այդ բո-
րորը, առանց «ճիշդ ու ջանքի»։ Նոր հայկազեան բառարանը հայրապարհաբան բա-
ռը բացատրել է որպէս «Հնարք. ջանք. նիւթելն. գիւտք... կցկցումն, կրկը-
տումն»։ և վկայութիւն է բերուած Եղնիկի քննարկուող նախադասութիւնը։
Պարզ է, որ «Ջանք» նշանակութիւնից բացի միւս բացատրութիւնները յարմար
են այս նախադասութեան։

23. Դարձեալ եւ լուսնի՝ թե ոչ իւր առանձինն իցէ լոյս, նախ նոցա
բանն սոյի՝ գոր աւեն, երբ ի յաճախելն՝ յամենայն իմիք անէ հիւքն՝ որ ի նը-
մայն է, եւ ի լնուլն՝ լնու եւ ի պակասելն՝ պակասէ։ Որպէս փորձ իրացն իսկ
յուզիդոս ամենայն մտեղեաց ցուցանէ, եւ ի ծառս և ի տունկս խոնաւութիւնն
(Մ 95.6-10, Բ 214-215) — «Դարձեալ» (պնդում են,) թէ լուսինը սեփական
լոյս չունի։ (Դրանով) նախ ժխտում է իրենց ասած այն խօսքը, թէ (լուսնի)
մեծանալու ժամանակ ամէն մի առարկայի մէջ աճում է այնտեղ եղող հիւթը.
լրանալու ժամանակ լցում է, պակասելու ժամանակ՝ պակասում, ինչպէս որ
հենց փորձն ու իրողութիւններն են ցոյց տալիս բոլոր մտեղէն (էակների) ու-
ղեղների եւ ծառերի ու տունկերի միջի խոնաւութեամբ» (137)։

Թարգմանութեան մէջ մի քանի անճշտութիւններ կան։

ա. Բնագրի առաջին նախադասութիւնը նշանակում է. «Դարձեալ եւ՝
եթէ լուսինը չունի իրեն սեփական լոյս, նախ՝ սուտ է դուրս գալիս նրանց
այն խօսքը, որ ասում են, թէ...»։ այսինքն՝ բնագրի քննարկում է
«եթէ»։ Այսպիսով աղատում ենք փակադճերում թարգմանչի աւելացրած
«պնդում են» եւ «դրանով» բառերից, որոնք փոխում են բնագրի իմաստը։

բ. Բնագրի յաճախելն, հետեւաբար լնուլ ու պակասել բայերի ենթա-
կան փակադճերում համարուել է լուսինը, ուստի եւ հակառակ դրաբարի բա-
ռարանների՝ յաճախել բայը, որ նշանակում է «չատանալ, աւելանալ, բազմա-
նալ», թարգմանուել է «մեծանալ»։ Մարիէզսի հետ համաձայն ենք, որ այդ
բայերի ենթական աբսոլյտ լոյս դոյականն է. նա որպէս փաստ նշում է այն,
որ լուսնի աճման մասին խօսելիս Եղնիկը դորձածել է անել բայը քննարկուող
տողերին յաջորդող պարբերութեան մէջ. «...որոց ջուրն րստ անել լուսնին
աճէ եւ րստ լնուլն լնու և րստ պակասելն պակասէ»։ Աւելացնենք, որ այս տո-
ղերից առաջ Եղնիկը յաճախել բայը դորձածել է լոյս դոյականի հետ, դար-
ձեալ լուսնի մասին խօսելիս. «յաճախէ ի նա լոյսն» (Մ 89.6-7, Բ 200)։ Ուստի
բնագրի ի յաճախելն բայը թարգմանելու ենք «երբ (լոյսը) աւելանում է», ի
լնուլն՝ «երբ (լոյսը) լիանում է, լրիւ է լցւում», ի պակասելն՝ «երբ (լոյսը)
պակասում է»։

գ. Պարբերութեան վերջին նախադասութիւնը բնագրում երկու եւ-
նակալ ունի՝ փորձ իրացն եւ խոնաւութիւնն։ Սակայն բայը երկու է՝ ցու-
ցանէ, քանի որ ենթականերից իւրաքանչիւրին է վերաբերում։ Թարգմանչը
երկրորդ ենթական դարձրել է միջոցի անուղղակի խնդր՝ «խոնաւութեամբ»,
առանց հաշուի առնելու նրա ուղղական հոլովը։ Բացի այս, հակառակ հեղի-
նակին, թարգմանչը դրանով նոյն «խոնաւութիւնն» է վերադրել «ամենայն
մտեղեաց»՝ «մտեղէն բոլոր արարածներին», և ծառերն ու տունկերին, մինչդեռ
առաջինների համար Եղնիկը դորձածել է «ուղիղ» բառը, որ դրւում է նաեւ
«ուղեղ»։ Եւ այս բանն այստեղ «ուղեղ» չի նշանակում, այլ «ծուծ», ինչպէս
բացատրուած է նոր հայկազեան բառարանում, եւ Եղնիկի այս նախադասու-
թիւնն է վկայութիւն բերուած։ Ուստի պարբերութեան վերջին նախադասու-

թիւնը նշանակում է. «Ինչպէս ցոյց է տալիս (իրերի) փորձը բոլոր մեղէն աւարածների ծուծերում, և (հիւթի) խոնաւութիւնը ծառերում և տունկերում»:

24. Թե յապակի սպիտակ՝ ջուր արկեալ յարեաւ ունիցիս, լուսաւորութեան արեւուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն և ընդ յստակութիւն ջրոյն աւղով թափանցանց՝ անցեալ՝ հուր ծնուցանէ (Մ 97.12-14, Բ 219-220) — «Եթէ սպիտակ ապակու վրայ ջուր թափես ու արեւի առաջ պահես, արեւի լոյսը, մտնելով պայծառ ապակուց ու անցնելով յստակ ջրի եւ օդի միջով, կրակ կ'առաջացնի» (140):

Երեք դիտողութիւն ունենք:

ա. Նախ՝ ապակի բառի թարգմանութեան մասին. Նոր Հայկազեան բառարանը նշում է, որ «ապակի» իմաստից բացի, այն նշանակում է «չիշ, բաժակ, գաւաթ», և իրեր վկայութիւն բերում է Եզնիկի նախադասութիւնը: Ուստի բնագրի յապակի սպիտակ բառերը թարգմանելու է «սպիտակ չիշ մէջ», ինչպէս արել է Մարիէսը, բայց ոչ Գ. Յաչատուրեանը, որին բնագործակէլ է Ա. Աբրահամեանը: Նոյնիսկ եթէ բառարանի բացատրութեան և վկայութեան հաւատ չընծայէր, պիտի մտածէր, որ Եզնիկը անտարակոյս փորձով գիտէր, թէ սպիտակ կամ այլ դոյնի ապակու վրայ եթէ «ջուր թափես ու արեւի առաջ պահես», ապա ջուրը, եթէ երբէք նոյնիսկ մնայ ողորկ ապակու վրայ, արեւի ջերմութեան ազդեցութեան տակ կը դոյրըշխանայ առանց կրակ առաջացնելու:

բ. Ընդ սպիտակութիւն ապակւոյն բառերը թարգմանուած են «պայծառ ապակուց». ինչո՞ւ չասել «սպիտակ ապակուց», քանի որ Հեղինակը նրկատի ունի «յապակի սպիտակ», և ընդգծուած անականը նախադասութեան սկզբում թարգմանուել է «սպիտակ»:

գ. Վերսիւսը, է թարգմանել ընդ յստակութիւն ջրոյն աւղով քափանցանց՝ անցեալ բառերը՝ «անցնելով յստակ ջրի եւ օդի միջով»: Նախ՝ բնագրում ջրոյն «ջրի» ու աւղոյն «օդի» միջև միաւորող և չաղկապ չկայ: Երկրորդ՝ ընդ նախդիրը միայն յստակութիւն հայցականի հետ կարող է նշանակել «միջով», իսկ աւղով-ը գործիական է: Երրորդ՝ թարգմանութեան «անցնելով» գերբայը համապատասխանում է բնագրի անցեալ գերբային, իսկ ո՞ւր մնաց բնագրի քափանցանց բառը: Մարիէսը ճիշտ է ըմբռնել, որ աւղով քափանցանց բառերը նշանակում են «օդով ներթափանցուած, ներծծուած» և վերարեբում են ջրոյն գոյականին (ծան. 768, թարգմանութեան էջ 113.1), որի վրայ մենք բռնի կը զննենք կամ նրա լրացումը կը տրոհէինք ստորակէտնորով. ուստի ընդ յստակութիւն ջրոյն՝ աւղով քափանցանց՝ անցեալ բառերը նշանակում են «օդով ներթափանցուած յստակ ջրի միջով անցնելով»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Երուսաղէմ

Շարունակելի